ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-18/09-01

ք.Քաջարան «04» 09 2018թ

Քաջարանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ալվարդ Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 38 /երեսունութ/ օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր : Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **6 652 000 /վեց միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար/ ՀՀ դրամ, որից 1 108 667 /մեկ միլիոն մեկ հարյուր ութ հազար վեց հարյուր վաթսունյոթ / ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 /վեց/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Քաջարանի համայնքապետարան	<<ԱՐՏՇԻՆ-1>> ՍՊԸ
ք.Քաջարան,Լեռնագործների 4	ք.Երևան, Կարապետյան փ. 9
ՀՀ ՖՆ գործառն.վարչ.	«Անելիք բանկ» ՓԲԸ, Դավթաշենի մ/ճ
հհ 900312242044	հհ 11811006695800
հվհհ 09426045	հվհհ 01277633
----------	Տնօրեն _____ Ա. Դավթյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 04 » սեպտեմբերի 2018 թ. կնքված
ՍՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-18/09-01 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը /հազ. դրամ/
	Նախահաշիվ N1 /Լոտ 1/ Շինարարական աշխատանքներ				
	<u>ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄ</u>				
1.	Բոլոր չգորգող բաց մալուխների ապամոնտաժում	գմ	100	0,12	11,99
	<u>ՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ</u>				
2.	Արտաքին պատի (T=440 մմ) մեջ օդանցքների խողովակների շուրջ ջերմամեկուսացում, փքվող փչովի նյութով (ըստ անհրաժեշտության)	կետ	5	0,88	4,40
3.	ԳԿԹ (T=12 մմ) պատերի (T=76-100 մմ) կառուցում, ներառյալ ինքնապարուրվող պտուտակներն ու ձայնախլացուցիչ ռետինները:ԳԿԹ-ն ստադի երկու կողմից:	$մ^2$	9	7,40	66,62
4.	Նախորդի ձայնա և ջերմամեկուսացում հանքային բամբակով T=50մմ	$մ^2$	9	0,78	7,03
	<u>ԱՌԱՍՏԱՂՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ</u>				
5.	ԳԿԹ (հ=9մմ) կախովի առաստաղի կառուցում, ներառյալ ստադերը և ամրացման բոլորը դետալները	$մ^2$	80	5,64	451,38
6.	ԳԿԹ (հ=9մմ) կախովի առաստաղի մեջ տանիքի սպասրկման համար նախատեսված դիտանցքեր (դռնակով),	հատ	2	7,69	15,38

	դռների համար պահանջվող բոլոր դետալները				
	<u>ՀԱՏԱԿՆԵՐ</u>				
7.	Ցեմենտ-ավազե երեսատվաղ, 20 մմ	մ^2	80	1,07	85,58
8.	Հատակի սալապատում պրեսգրանիտե սալիկներով (ներառյալ սալիկի սոսնձանյութը), սալիկի չափը 450x400 մմ, գույնը՝ բաց մոխրագույն, խանութը՝ ԻԴԵԱԼ Համակարգ, անվանում M CITY GRIS 45x45	մ^2	27	13,62	367,65
9.	Հատակի սալապատում պրեսգրանիտե սալիկներով (ներառյալ սալիկի սոսնձանյութը), սալիկի չափը 450x400 մմ, գույնը՝ մուգ մոխրագույն, խանութը՝ ԻԴԵԱԼ Համակարգ, անվանում M CITY GRAFITO 45x45	մ^2	27	13,62	367,65
10.	Հատակի սալապատում պրեսգրանիտե սալիկներով (ներառյալ սալիկի սոսնձանյութը), սալիկի չափը 450x400 մմ, գույնը՝ սև, խանութը՝ ԻԴԵԱԼ Համակարգ, անվանում M UNICA GRAFITO	մ^2	27	12,34	333,19
	<u>ՇՐԻՇԱԿՆԵՐ ԵՎ ՄԱԼՈՒԽԱՏԱՐ ՍԱԿԱՌՆԵՐ</u>				
11.	NMC կատալոգից՝ բարձր խտության պոլիստերոլից (HDPS) շրիշակների տեղադրում, մոդել՝ FL5, H=100 մմ	գմ	40	2,51	100,41
12.	20x20 մմ չափերով ալյումինե անկյունակի տեղադրում ներկառուցվող սակառների ակոսը պատրաստելու համար	գմ	40	0,99	39,45
13.	Պատի մեջ ներկառուցվող և վերադիր (դեպի սերվեր հոսանքի մալուխի համար) պլաստիկ սակառներ 20x60 մմ, պլաստիկ կափարիչով	գմ	40	0,94	37,72
14.	40x15 մմ փայտե չորսու շրիշակը պատին ձգելու համար	գմ	40	0,32	12,71
15.	Պտուտակ+դյուբել՝ սակառները, փայտե չորսուն և շրիշակները պատերին ձգելու համար	կ-տ	65	0,11	7,00
16.	Երկկողմանի ինքնակպչուն մոնտաժային ժապավեն սակառների տեղադրման համար	գմ	40	0,40	16,15
	<u>ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ</u>				
17.	Պատերի գիպսոնիտե սվաղում (շաղախը՝ 70% գիպսոնիտ՝ 30% գիպս)	մ^2	115,0	2,57	296,04

18.	Պատերի հարդարարական շերտի հղկում-հարթեցում, նոր գրունտի շերտի պատրաստում, ներառյալ շեպույթները՝ 4.2մ^2	մ^2	115,0	0,41	47,12
19.	Ակոսների բացում՝ դեպի վարդակներ մալուխների անցկացման համար	գմ	40	0,38	15,21
20.	Ակոսների փակում	մ^2	1,60	2,57	4,12
21.	Պատերի ներկում (երկու շերտ) լատեքսային ներկով (ներկի գրունտի վրայից), բարելավված որակի, ծեփամածկումով, սպունգով լվացվող, գույները ըստ նախագծի, ներառյալ շեպույթները՝ 4.2մ2	մ^2	115	1,52	174,86
22.	Առաստաղի ներկում (երկու շերտ) լատեքսային ներկով (ներկի գրունտի վրայից), բարելավված որակի, սպունգով լվացվող, ծեփամածկումով գույները ըստ նախագծի	մ^2	80,0	1,66	133,07
23.	Կավե ծաղկաման N1	հատ	3	3,84	11,53
24.	Կավե ծաղկաման N2	հատ	3	8,72	26,16
	<u>ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ</u>				
25.	∅150 մմ-ոց անցքերի բացում 400 մմ հաստությամբ արտաքին պատի մեջ, օդանցքների համար	հատ	4	5,36	21,45
26.	∅100 մմ-ոց անցքի բացում 400 մմ հաստությամբ արտաքին պատի մեջ, սերվերի համար	հատ	1	5,36	5,36
27.	Պոլիպրոպիլենե օդատար հարթ խողովակով, ∅150 մմ	գմ	2	4,96	9,92
28.	Օդանցքի շերտավարագույր, 200x200 մմ, ներկել պատի գույնի, նոր օդանցքների համար	հատ	4	5,12	20,49
29.	Առանցքային օդամուղ սերվերի պահարանից օդի արտածման համար, ավտոմատ կարգավորվող ճաղաշարով կամ դռնակով ∅100, նոր օդանցքների համար	հատ	1	25,55	25,55
30.	Օդանցքի մետաղական ցանց, ∅150մմ (ներսի կողմից), նոր օդանցքների համար	հատ	4	4,35	17,42

	ՋԵՌՈՒՑՈՒՄ				
31.	Ջեռուցիչի խողովակաշարի համար փականներ	հատ	10	4,67	46,70
32.	Ջեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում	էկմ	17	0,77	13,08
33.	Ջեռուցման ալյումինե մարտկոցներ h=500մմ /12 սեկցիանոց - 1 հատ /	սեկցիա	12	6,10	73,21
34.	Ջեռուցման ալյումինե մարտկոցներ h=500մմ /10 սեկցիանոց - 1 հատ/	սեկցիա	10	6,10	61,01
35.	Ջեռուցման ալյումինե մարտկոցներ h=500մմ /8 սեկցիանոց - 2 հատ/	սեկցիա	16	6,10	97,61
36.	Ջեռուցման ալյումինե մարտկոցներ h=500մմ /6 սեկցիանոց - 5 հատ/	սեկցիա	30	6,10	183,02
37.	Խողովակ (պլաստմասսե (PPR)): Մոնտաժվում է հատակի մեջ, դեպի ջեռուցիչներ բարձրացումը՝ պատի միջով: Արտաքինից ոչ մի խողոցակ չի երևում	գմ	100	1,96	196,18
38.	Պարուրով դետալներ	հատ	28	1,22	34,10
39.	Առանց պարուրի դետալներ	հատ	15	0,59	8,79
40.	Փականներ նախորդի համար	հատ	10	4,67	46,70
41.	Կախիչներ մարտկոցների համար	հատ	20	0,64	12,83
42.	Ալեկաբոնդե թիթեղի ամրացում պատին, ջեռուցիչների հետևում: Չափը՝ ջեռուցիչի չափից 80 մմ կարճ ամեն կողմից	$մ^2$	6	11,86	71,14
	ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
43.	Գալարավարագույրներ, 3 հատ: Գույնը և կտորի նմուշը	$մ^2$	11	8,97	98,62

	համաձայնեցնել ճարտարապետի հետ				
	ԱՅԼ				
44.	∅30 մմ անցքի բացում պատի մեջ: Մեջը տեղադրել մետաղական խողովակ: Մալուխների համար	հատ	1	1,23	1,23
	Ընդամենը			**3676,85**	
	Նախահաշիվ N2 /Լոտ 2/ Լուսամուտներ, դռներ				
45.	6250x2950մմ չափերով դուռ լուսամուտ, E1000 ալյումինե շրջանակով, շրջանակի գույնը՝ PULVER 09030.05005 (էլեկտրոլիզով ներկված), միաշերտ ապակի T=12 մմ, կոփած: Ապակին թափանցիկ, անգույն: Ապակիների արանքում տեղադրել M3 տեսակի երկկողմանի ինքնակպչուն ժապավեն; Այլ մանրամասները տես նախագծում, այդ թվում դուռ 1.89մ^2	մ^2	10,325	50,075	517,02
46.	Այդ թվում դռան բռնակ, մետաղական գլանաձև ձող D=35-40 մմ, L=850 մմ, գույնը՝ պողպատ/քրոմ, տեղադրվում է դռան երկու կողմից	կ-տ	1	35,0525	35,05
47.	Այդ թվում դռան Dorma չափաբերիչ (40 կգ-ի համար), գույնը՝ մոխրագույն, տեղադրվում է բացվող կողմից (դռան վերնամասում) , բարձրորակ դռան փական, տակառաձև լեզվակով, բանալիներով, գույնը՝ պողպատ/քրոմ, դռան սահմանափակիչ, գույնը՝ պողպատ/քրոմ, թափանցիկ ռետինե օղակով	հատ	1	170,255	170,26
48.	Պարակալներ: L-աձև ալյումինե պրոֆիլ 20x20 մմ կամ 30x30 մմ , գույնը՝PULVER 09038.07016 (էլեկտրոլիզով ներկված), սոսնձվում է սիլիկոնով, ներառյալ մոնտաժային ինքնակպչուն առաձգական ժապավենները, մոնտաժային երկկոմպոնենտ սոսինձը: Պարակալների մեկ կողմը տեղադրվում է պատի և դռան շրջանակի արանքում	գմ	9,35	2,4036	22,47
49.	Տրանսպորտային ծախսեր		1	30,045	30,05
	Ընդամենը			**774,85**	
	Նախահաշիվ N3 /Լոտ 3/ Անջատիչներ, վարդակներ, ապահովիչներ, մալուխներ				
50.	1 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	6	0,11	0,67
51.	2 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	4	0,25	0,99
52.	4 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	7	0,45	3,12
53.	1 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	6	0,25	1,49

54.	2 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	4	0,80	3,21
55.	4 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	7	1,49	10,40
56.	2 տեղանոց էլեկտրական վերադիր վարդակ, տիպ F, CEE 7/3 (Schuko) 16 Ա, 250 Վ, երկբևեռային հողանցումով	հատ	1	1,42	1,42
57.	4 տեղանոց էլեկտրական վերադիր վարդակ, տիպ F, CEE 7/3 (Schuko) 16 Ա, 250 Վ, երկբևեռային հողանցումով	հատ	2	1,42	2,84
58.	Էլեկտրական ներկառուցվող վարդակ, տիպ F, CEE 7/3 (Schuko) 16 Ա, 250 Վ, երկբևեռային հողանցումով	հատ	30	1,32	39,64
59.	1 տեղանոց RJ-45 տիպի, cat. 5՝ համակարգչային ցանցի վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	3	5,84	17,52
60.	2 տեղանոց RJ-45 տիպի, cat. 5՝ համակարգչային ցանցի վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	7	5,84	40,88
61.	RJ-45 + RJ-11 տիպի (համակարգչային ցանց + հեռախոս) վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	2	5,22	10,43
62.	Անջատիչ երկու ստեղնով	հատ	2	3,12	6,24
63.	Անջատիչ երկու ստեղնով	հատ	3	1,85	5,55
64.	Էլեկտրական շղթայի ավտոմատների ներկառուցվող պլաստիկ արկղ, 36 մոդուլի համար, Legrand Practibox Կոդ՝ 12240 կամ համարժեք	հատ	1	28,88	28,88
65.	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, երկբևեռ, 63 A, C դաս, 6kA: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության 1. Խումբ 2, 4, 5 2. Խմբեր 3	հատ	2	10,06	20,12
66.	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, երկբևեռ, 40 A, C դաս, 6kA: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության 1. խումբ 1	հատ	1	9,13	9,13
67.	ТХЗ УЗО, 63 Ա, 220 Վ	հատ	2	16,90	33,81

	1. Խումբ 2, 4, 5 2. Խմբեր 3				
68.	ТХ3 УЗО, 40 Ա, 220 Վ 1. Խումբ 1	հատ	1	15,28	15,28
69.	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХ3, 10 Ա, С դաս, միաբևեռ: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության 1. Խումբ 2	հատ	1	3,56	3,56
70.	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХ3, 10 Ա, В դաս, միաբևեռ: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության Խումբ 4	հատ	1	3,77	3,77
71.	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХ3, 6 Ա, В դաս, միաբևեռ: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության Խումբ 5	հատ	1	4,20	4,20
72.	Խրամուղու քանդում և հետլիցք հողանցման կառուցման համար	$մ^3$	10	3,36	33,56
73.	50x50x5 մմ, L=2.5 մ Պողպատե անկյունակների ուղղաձիգ տեղադրում հողի մեջ, հողանցման համար	հատ	4	7,65	30,62
74.	Պողպատե շերտաձող —40x4, հողանցման համար	գմ	15	1,34	20,14
75.	Պողպատե շերտաձող —40x4, խրամուղում, հողանցման համար	գմ	3	0,99	2,96
76.	Հողանցման ալյումինե հաղորդալարի անցկացում, 1x25$մմ^2$ հատվածքով	գմ	30	0,62	18,54
77.	Էկզոթերմիկ եռակցում հողանցման համար	կետ	4	0,23	0,93
78.	Պոլիէթիլենային խողովակ ∅50 մմ /Դրսից դեպի ապահովիչների տուփ հողանցման մալուխի համար/	գմ	30	0,80	24,04
79.	ՊՎՔ խողովակի անկյունակ ∅50 մմ /Տեղադրվում է նախորդի ծայրերին/	հատ	8	0,16	1,31
80.	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x10 $մմ^2$ /Էլ. վահանից մինչև	գմ	40	2,49	99,68

	ՔՍԳ-ի ավտոմատների տուփ/				
81.	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x2.5 մմ^2 Խումբ 1 կոնտուրներից վարդակների մեջ մտնողները	գմ	40	0,73	29,25
82.	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x2.5 մմ^2 Խումբ 2 կոնտուրներից վարդակների մեջ մտնողները	գմ	13	0,73	9,51
83.	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x10 մմ^2 Խումբ 3 կոնտուրներից վարդակների մեջ մտնողները	գմ	60	2,49	149,53
84.	Էլ. հոսանքի պղձե մալուխ, 3x1.5 մմ^2, ջիղերը իրար կողք (տափակ) Խմբեր 4, 5	գմ	60	0,49	29,42
85.	Էլ. հոսանքի պղձե մալուխ, 3x1 մմ^2, թափանցիկ պաշտպանիչ պատյանով (լուսատուների համար) Խումբ 4	գմ	10	0,37	3,69
86.	Ծալքավոր ճկուն պլաստիկ խողովակ, ∅20 մմ, մալուխների մոնտաժման համար, մոխրագույն Դեպի RJ-11 ու RJ-45 վարդակներ (պատերի մեջ, սեղանների դիմային պանելի ներսի կողմից)	գմ	200	0,47	94,49
87.	Նախորդի պլաստիկ ամրակներ և ինքնապարուրող պտուտակներ (Lmax=18մմ)	հատ	30	0,03	0,89
88.	Գնված լուսատուների տեղադրում	հատ	16	1,78	28,48
	Ընդամենը			**840,20**	
	Նախահաշիվ N4 /Լոտ 4/ Անվտանգության համակարգեր				
89.	Ղեկավարման վահանակ	հատ	1	81,84	81,84
90.	Ծխի դետեկտոր	հատ	3	7,68	23,03
91.	Վթարային մարտկոց: Վթարային մարտկոց (7-12 Ա): Մատրիքս մոդել, Պիրոնիքս ֆիրմայի արտադրության կամ տեխնիկապես համարժեք: Մոդուլներ ավելացնելու հնարավորությամբ	հատ	1	11,89	11,89
92.	Շարժման դետեկտոր 360 աստիճանի մոդել	հատ	3	6,76	20,29

93.	Ներսի ազդարարիչ	հատ	1	4,76	4,76
94.	Դրսի ազդարարիչ	հատ	1	40,86	40,86
95.	Մալուխ	գմ	70	0,30	21,19
96.	Կրակմարիչ, 750-1000 գրամ, CO_2-ով, ներառյալ կախիչները	հատ	5	6,00	29,99
97.	Տրանսպորտային ծախսեր			10,00	
	Ընդամենը			**233,85**	
	Նախահաշիվ N5 /Լոտ 5/ Լուսատուներ				
98.	Կախովի լուսատու (մոդել՝ WJK001, կոդ՝ 01305)՝ 500x500x500 չափի, 24W, 4000K հզորության լամպերի համար: Առաստաղից կախելու բոլոր պիտույքների հետ միասին՝ կոմպլեկտով: Հողանցումով: Լուսատուի և լամպի տեսքը՝ ըստ նախագծում տրված նկարի	հատ	2	23,74	47,49
99.	Կախովի լուսատու (մոդել՝ WJK001-S, կոդ՝ 06220)՝ 500x500x500 չափի, 30W, 4000K հզորության լամպերի համար: Առաստաղից կախելու բոլոր պիտույքների հետ միասին՝ կոմպլեկտով: Հողանցումով: Լուսատուի և լամպի տեսքը՝ ըստ նախագծում տրված նկարի	հատ	3	23,74	71,23
100.	Կախովի լուսատու (կոդ՝ E6/A)՝ 300x300 չափի: Առաստաղից կախելու բոլոր պիտույքների հետ միասին՝ կոմպլեկտով: Հողանցումով: Լուսատուի և լամպի տեսքը՝ ըստ նախագծում տրված նկարի	հատ	1	19,79	19,79
101.	Կախովի լուսատու (կոդ՝ E6/C)՝ 300x300 չափի: Առաստաղից կախելու բոլոր պիտույքների հետ միասին՝ կոմպլեկտով: Հողանցումով: Լուսատուի և լամպի տեսքը՝ ըստ նախագծում տրված նկարի	հատ	1	19,79	19,79
102.	Կախովի լուսատու (կոդ՝ E6/D)՝ 300x300 չափի: Առաստաղից կախելու բոլոր պիտույքների հետ միասին՝ կոմպլեկտով: Հողանցումով: Լուսատուի և լամպի տեսքը՝ ըստ նախագծում տրված նկարի	հատ	1	19,79	19,79
103.	Առաստաղին ներկառուցվող լուսատու (կոդ՝ LDM-S225W25-D)՝ 220x220 չափի, 25 W հզորությամբ: Լուսատուի տեսքը՝ ըստ նախագծում տրված նկարի	հատ	4	12,67	50,67
104.	Առաստաղից կախվող շրջանաձև լեդ լուսատու՝ U600 չափի, 48W հզորությամբ: Լուսատուի տեսքը՝ ըստ նախագծում տրված նկարի	հատ	4	34,63	138,53
105.	Լուսատուները առաստաղից կախելու համար նախատեսված մետաղական ճոպան	գմ	5	0,85	4,27

106.	Տրանսպորտային ծախսեր			30,00	
Ընդամենը				**371,57**	
Ամբողջը /լոտ 1,2,3,4,5/				**5897,32**	
ԱԱՀ 20%				1179,46	
Ընդամենը				**7076,78**	

Կապալառուն աշխատանքները կատարում է ք.Քաջարան,Լենագործների 4 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Քաջարանի համայնքապետարան
ք.Քաջարան,Լենագործների 4
ՀՀ ՖՆ գործառն.վարչ.
հհ 900312242044
հվհհ 09426045

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԱՐՏՇԻՆ-1>> ՍՊԸ
ք.Երևան, Կարապետյան փ. 9
«Անելիք բանկ» ՓԲԸ, Դավթաշենի մ/ճ
հհ 11811006695800
հվհհ 01277633

Տնօրեն Ա. Դավթյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 04 » սեպտեմբերի 2018 թ. կնքված
ՍՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-18/09-01 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Շինարարական աշխատանքներ	պայմանագրի կնքման օրվանից սկսած	15 օր
2	Լուսամուտներ, դռներ, ապակե միջնորմներ	16-րդ օրվանից	5 օր
3	Անջատիչներ, վարդակներ, ապահովիչներ, մալուխներ	21-րդ օրվանից	7 օր
4	Անվտանգության համակարգեր	28-րդ օրվանից	5 օր
5	Լուսատուներ	33-րդ օրվանից	5 օր
ԸՆԴԱՄԵՆԸ		**պայմանագրի կնքման օր**	38 օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Քաջարանի համայնքապետարան
ք.Քաջարան,Լեռնագործների 4
ՀՀ ՖՆ գործառն.վարչ.
հհ 900312242044
հվհհ 09426045

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԱՐՏՇԻՆ-1>> ՍՊԸ
ք.Երևան, Կարապետյան փ. 9
«Անելիք բանկ» ՓԲԸ, Դավթաշենի մ/ճ
հհ 11811006695800
հվհհ 01277633

Տնօրեն _____ Ա. Դավթյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
« 04 » սեպտեմբերի 2018 թ. կնքված
ՍՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-18/09-01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազ. ՀՀ դրամ

Աշխատանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում		
			3-րդ եռ.	4-րդ եռ.	Ընդամենը
1.	45261167	Քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցում և վերանորոգում	3326,00	6652,00	**6652,0**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Քաջարանի համայնքապետարան
ք.Քաջարան,Լեռնագործների 4
ՀՀ ՖՆ գործառն.վարչ.
հհ 900312242044
հվհհ 09426045

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԱՐՏՇԻՆ-1>> ՍՊԸ
ք.Երևան, Կարապետյան փ. 9
«Անելիք բանկ» ՓԲԸ, Դավթաշենի մ/ճ
հհ 11811006695800
հվհհ 01277633

Տնօրեն _____ Ա. Դավթյան
(ստորագրություն)
Կ.Տ